Առաջադրանքի պայմաններ

ԵԳՖԱԾ-ի հաջողության պատմությունների արձանագրում և տեսաֆիլմի ստեղծում

1. Ծրագրի նկարագիր

«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը» (ԵԳՖԱԾ) նպատակ ունի աջակցել Հայաստանի կառավարությանը գյուղական բնակավայրերում համատարած աղքատության հաղթահարման գործում: Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, վերականգնելով երրորդային ոռոգման ենթակառուցվածքները, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեշղթայի օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով: ԵԳՖԱԾ-ի իրականացումը կտևի վեց տարի՝ սկսած 2016 թվականից:

Ծրագրի թիրախային տարածքներն են ՀՀ 7 մարզեր՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի: Գյուղական ֆինանսավորման բաղադրիչը կիրականացվի երկրի ողջ տարածքում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ենթակառուցվածքների բաղադրիչի իրականացման աշխարհագրական տարածքին: ԳԷՀ-ի կողմից ֆինանսավորվող Հողերի կայուն կառավարման բաղադրիչը, բացի ծրագրի հիմնական տարածքներից, ուղղված կլինի Արարատի մարզի մի շարք ընտրված համայնքների:

Ծրագիրը ներառում է 4 բաղադրիչ՝ (i) Գյուղական ֆինանսավորում, (ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ (ԳՏՋԵ), (iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն, (iv) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում (ՀԱԱՈՒՀԿԿ):

(i) Գյուղական ֆինանսավորում բաղադրիչի նպատակն է խթանել գյուղական վայրերում տնտեսության կայուն զարգացումը՝ գյուղական փոքրածավալ արտադրողների ու ՓՄՁ-ների համար համապատասխան ֆինանսական ծառայությունների բարելավման և ընդլայնման միջոցով:

(ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ բաղադրիչն ուղղված է գյուղական համայնքներում կենցաղային և ոռոգման նպատակների համար ջրի հասանելիության բարելավման պահանջին:

(iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն բաղադրիչն ուղղված է թիրախային համայնքներում գյուղատնտեսական համակարգերի արդյունավետության բարելավմանը և ֆերմերներին տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման տրամադրմանը:

(iv) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ռիսկային գոտիներում բնակվող գյուղական համայնքների ընդհանուր կայունությունը:

Բաղադրիչ 1. Գյուղական ֆինանսավորում: Բաղադրիչի իրականացումը հիմնվում է ֆինանսական հատվածի երկու գործիքների վրա, որոնք ստեղծվել են ԳՋՄՀ-ի նախորդ ծրագրերի ընթացքում, այն է՝

- վերաֆինանսավորող կառույց հանդիսացող «Գյուղական ֆինանսավորման կառույցը» (ԳՖԿ), որը մասնակից ֆինանսական կառույցների միջոցով ֆինանսավորում է տրամադրում գյուղատնտեսության ոլորտին, ինչպես նաև
- նորարարական գյուղատնտեսության զարգացմանը նպատակաուղղված «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը» (ՀԳՏՏՋՀ):

Բաղադրիչ 2. Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ (ԳՏՋԵ): Այս բաղադրիչի շրջանակում ներդրումներ են կատարվել գյուղական ենթակառուցվածքներում, մասնավորապես՝ գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգերում և փոքր ու միջին ոռոգման համակարգերում: Բաղադրիչն իրականացվում է ՄՋՕՀ-ի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ և ներառում է երեք ենթաբաղադրիչ՝ 2.1. Ընթացակարգերի, ձեռնարկների, հետազոտությունների և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների մշակում, 2.2. Համայնքային ջրամատակարարում (ՀՋ) և 2.3. Ոռոգման բաշխման փոքր և միջին համակարգեր (ՈԲՓՄՀ):

Ենթաբաղադրիչ 2.2. Համայնքային ջրամատակարարում (ՀՋ) ենթաբաղադրիչի նպատակն է բարելավել ծառայությունների մակարդակը, ինչպես նաև անվտանգ ու մաքուր խմելու ջուր մատակարարել աղքատ համայնքների, որտեղ մարդիկ օգտվում են ընդհանուր ծորակից կամ ունեն օրական 6 ժամից պակաս ջրամատակարարում: Առաջնորդվելով պահանջարկի վրա հիմնված ծրագրային մոտեցմամբ՝ ենթաբաղադրիչի շրջանակում ֆինանսավորվել է բազմանպատակային, այդ թվում՝

մարդկանց կարիքների, ինչպես նաև անասունների ջրարբիացման և տնամերձ հողամասերում այգեգործական արտադրության նպատակներին ծառայող ջրամատակարարման ցանցերի կառուցումը կամ վերականգնումը բոլոր 7 մարզերի 29 համայնքներում:

Բաղադրիչի ներքո իրականացվող շինարարական աշխատանքների շրջանակներում նախատեսվում են ներդրումներ 2 փորձնական ծրագրում (սառնարանային տնտեսություններ) Գեղարքունիքի մարզի Վարդենիկ և Շիրակի մարզի Հոռոմ համայնքներում: ԵԳՖԱԾ-ի թիրախային տարածքներում՝ ոռոգման վերականգնման համակարգերում կատարված ներդրումները լիարժեքորեն ամրապնդելու համար սահմանվել է հետբերքահավաքային աշրժեշղթայի զարգացման ներդրումային երկու ծրագիր:

<u>Ենթաբաղադրիչ 2.3-ը</u> ֆինանսավորում է ոռոգման ենթակառուցվածքների շինարարությունը կամ վերականգնումը՝ բարելավելով ոռոգման ջրի բաշխումը և բարձրացնելով փոքր սեփականատերերի ոռոգվող հողակտորների արտադրողականությունը, ինչպես նաև ընդլայնելով համակարգերի արդիականացման արդյունքում խնայված ջրի հաշվին ոռոգվող տարածքները: Ներդրումները նպատակաուղղված են ինչպես գյուղատնտեսական հողերի, այնպես էլ տնամերձ հողակտորների մշակությանը:

<u>Բաղադրիչ 3. Ֆերմերների իրազեկում և աջակցություն</u>

Բաղադրիչի իրականացումը սերտորեն կապված է ենթակառուցվածքների, գյուղական ֆինանսավորման և հողերի կայուն կառավարման բաղադրիչների իրականացման հետ: Բաղադրիչի հիմնական խնդիրներն են՝ (i) բարելավել ծրագրի թիրախավորումը՝ կատարելագործելով աղքատության վերաբերյալ ներկա գնահատումները, (ii) բարելավել ֆերմերների իրազեկվածությունը՝ հնարավորությունների ընդլայնման միջոցով, (iii) զարգացնել ֆերմերների, ներառյալ՝ տնային տնտեսության ղեկավար հանդիսացող կանանց և երիտասարդության կարողություններն ուսուցման տրամադրման միջոցով, որի արդյունքում նրանք կկարողանան լիարժեքորեն օգտվել Ծրագրի կողմից իրականացված ենթակառուցվածքների բարելավումից, և (iv) տրամադրել ուսուցում բիզնեսի և ֆինանսական պլանավորման վերաբերյալ: Ենթաբաղադրիչը նախատեսում է տեխնիկական աջակցության տրամադրում և կարողությունների զարգացում՝ ուղղված թիրախային տարածքներում գյուղատնտեսական համակարգերի արդյունավետության բարելավմանը:

<u>Բաղադրիչ 4. ԳԷՀՀՀ-ի «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» ծրագիրը (ՀԱԱՈՒՀԿԿ, SLMIP)</u> հիմնվում է ԵԳՖԱԾ-ի ելակետային ծրագրի վրա և լիովին միաձուլված է դրան՝ թիրախային հանդիսացող

բարձրարժեք ագրոանտառային և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության ոլորտում հողի և ջրի պահպանման միջոցների ինտեգրման, ինչպես նաև ծրագրի համայնքային տարածքներում հողերի դեգրադացման և կլիմայական ռիսկերի նկատմամբ ագրո-էկոհամակարգերի և գյուղական բնակչության ճկունության վերականգնման նպատակով: ՀԱԱՈՒՀԿԿ ծրագրի ընդհանուր նպատակն է «բարձրացնել Հայաստանի ռիսկային տարածքներում բնակվող գյուղական համայնքների՝ կլիմայի փոփոխություններին դիմակայելու ճկունությունը», իսկ հատուկ նպատակը՝ «մեծացնել փոքրածավալ տնտեսություն վարող ֆերմերների եկամուտները և ակտիվները՝ հողերի կայուն կառավարման համակարգերում և տեխնոլոգիաներում ներդրումների միջոցով»: ԳԷՀՀՀ/ՀԱԱՈՒՀԿԿ ծրագրի ռազմավարությունը հիմնվում է հետևյալ ուղղությունների վրա.

<u>Ենթաբաղադրիչ 4.1. Ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում:</u> Ծրագիրը հիմնականում կկիրառի կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն տեխնոլոգիաներ ելակետային ծրագրով վերականգնված երրորդային ոռոգման համակարգերում և կաջակցի մարգինալ համայնքային հողերի փոխարկմանը կլիմայական ռիսկերի նկատմամբ ճկուն ագրոանտառային տնկարկների, որոնք կառավարվում են արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաներով և հողի ու ջրի պահպանման ագրոնոմիական համակարգերով, և կբարելավի գյուղատնտեսական արտադրանքի ոլորտում իրականացված ելակետային աշխատանքների կայունությունը: Ավելին, այս բաղադրիչը մասնավորապես նպատակաուղղված կլինի կանանց խմբերին՝ վերջիններիս աջակցելով սթարթափ փաթեթներով՝ բազմազանեցնելու նրանց ընտանիքներին պատկանող գյուղատնտեսական հողատարածքներում արտադրվող ապրուստի միջոցները՝ պարենային և սննդի անվտանգության բարձրացման նպատակով: Բաղադրիչը կունենա երկու պատուհան՝ **Պ1) Բազմազանեցման և պարենային անվտանգության ծրագիր (**ԲՊԱԾ՝ սթարթափ փաթեթներ) և **Պ2) Կայուն գյուղատնտեսական ծրագիր** (ԿԳԾ՝ Համակցված ֆինանսական պրոդուկտներ):

<u>Պատուհան 1:</u> ԲՊԱԾ-ի շրջանակում սթարթափ փաթեթները տրամադրում են մեղվապահության և այլ վայրի մթերքների արժեշղթաների զարգացման նպատակով: Պատուհան 1-ի շրջանակում սթարթափ փաթեթները նպատակաուղղված են 9 համայնքների 16 բնակավայրերում բնակվող առնվազն 1100 շահառուների (առնվազն 320 տնային տնտեսություն) հանրապետության հարավում՝ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում, և կենտրոնական-արևմտյան հատվածում՝ Արարատի մարզում: Պատուհան 1-ի շահառուները կստանան ոչ ավելի, քան 3,000 ԱՄՆ դոլար գումարով փաթեթներ և պետք է տրամադրեն սեփական ներդրում՝ դրամական կամ ոչ դրամական, դրամաշնորհի 10%-ի չափով:

<u>Պատուհան 2.</u> ԿԳԾ-ի (Համակցված ֆինանսական փաթեթներ) շրջանակում մոտ 313 նախապես ընտրված և վերապատրաստված ֆերմերներ կստանան Համակցված ֆինանսական փաթեթներ (ՀՖՊ), որոնք կներառեն 75% վարկային և 25%

դրամաշնորհային ֆինանսավորման բաղադրիչներ: Դրամաշնորհը պետք է կազմի ՀՖՊ-ի 25%-ը, սակայն ոչ ավելի, քան 7,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: ՀՖՊ-ները կուղղվեն գյուղատնտեսության հատուկ ոլորտների ֆինանսավորմանը. ա) պտղատու այգիների հիմնում և խնամք, բ) չորացրած մթերքի արտադրության կազմակերպում, գ) մեղվաբուծություն և դ) չջեռուցվող ջերմոցային տնտեսություններ:

<u>Ենթաբաղադրիչ 4.2. Լանդշաֆտների վերականգնման միջոցով համայնքային հողերի դեգրադացման կանխարգելում:</u> Ծրագիրը կկիրառի էկոհամակարգի վրա հիմնված լանդշաֆտային մոտեցում՝ հողերի դեգրադացման նկատմամբ խոցելի տեղանքների հայտնաբերման և ինտեգրված լանդշաֆտային վերականգնման միջոցառումներ իրականացնելու նպատակով՝ ոռոգման համակարգերի ֆունկցիոնալությունն ու երկարակեցությունը բարձրացնելու, հողատարումն և հողերի դեգրադացումը կանխելու, գետերի հուների, ջրհավաք ավազանների և լեռնալանջերի երկայնքով բուսածածկույթի բարելավման համար: Վերջնանպատակը բնապահպանական ծառայությունների վերականգնումն է, ինչը կնպաստի թիրախային գյուղական տարածքների զարգացմանը, ինչպես նաև վերականգնողական բազմակողմանի միջոցառումներից շրջակա միջավայրի, սոցիալական և տնտեսական օգուտների ապահովումը: Այս բաղադրիչը նաև կստեղծի եկամուտների բազմազանեցման հնարավորություններ վայրի արտադրանքի արտադրության, վերամշակման և մարքեթինգի միջոցով, ինչպիսիք են մեղվաբուծության արդյունքում ստացված ապրանքները՝ աջակցելով վերականգնված համայնքային հողերն օգտագործող երիտասարդական միությունների ստեղծմանը և ամրապնդմանը:

<u>Ենթաբաղադրիչ 4.3. Փոքր ֆերմերային տնտեսությունների կարողությունների բարձրացում հողերի դեգրադացման դեմ պայքարի նպաստավոր պայմանների ստեղծման միջոցով:</u> Ծրագիրը կստեղծի նպաստավոր միջավայր՝ փոքր ֆերմերների, որոշում կայացնողների և բոլոր համապատասխան դերակատարների կարողությունների զարգացման համար՝ ներառելու գյուղատնտեսական արտադրության և լանդշաֆտների վերականգնման լավագույն փորձը, որն օգնում է մեղմել անապատացման և հողերի դեգրադացման խնդիրները: Կանանց և երիտասարդության համար կմշակվեն և կիրականացվեն ուսումնական ծրագրեր: Այս բաղադրիչը նաև կգնահատի առկա քաղաքականությունը և կանոնակարգերը, ինչպես նաև ոլորտի՝ համալիր լուծում պահանջող խնդիրները, որոնք կարող են նպաստել կամ խանգարել կայուն գյուղատնտեսական համակարգերի կիրառմանը և լանդշաֆտի վերականգնման միջոցառումներին՝ հողերի դեգրադացումն ու կլիմայական ռիսկերը մեղմելու և քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ կատարելու նպատակով:

Ծրագրի ամբողջական փաստաթուղթը հասանելի է հետևյալ հղումով՝ www.raed.am:

2. Աշխատանքի շրջանակ

Ծառայություն մատուցողը (ԾՄ) տպագիր, լուսանկարահանման և տեսանյութերի միջոցով պետք է արձանագրի ԵԳՖԱԾ-ի ձեռքբերումները և ծրագրի շահառուների հաջողության պատմությունները: Պատմությունների ուսումնասիրության արդյունքները պետք է ընդգծեն 2016 թվականից ի վեր ԵԳՖԱԾ-ի շրջանակում գրանցված ձեռքբերումները: Արդյունքները կտրամադրվեն տարբեր թիրախային խմբերի, այդ թվում՝ շահագրգիռ կողմերին, ներկա և պոտենցիալ դոնորներին՝ Հայաստանի Հանրապետությունում ծրագրի իրականացման ազդեցությունը ներկայացնելու նպատակով: Առաջադրանքի նպատակն է ցույց տալ ծրագրի հաջողությունը:

ԾՄ-ն պետք է ուղևորվի 7 մարզեր, որտեղ իրականացվել է ԵԳՖԱԾ-ը՝ համայնքի անդամների, շահառուների և այլ շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցներ անցկացնելու համար՝ շահառուների պատմությունները համադրելու, վերլուծելու և ծրագրի վերաբերյալ տեսանյութ պատրաստելու նպատակով: Հաջողության պատմություններում պետք է հավասարապես լուսաբանվեն ԵԳՖԱԾ-ի բոլոր 4 բաղադրիչները: Տեսանյութի տևողությունը պետք է լինի առավելագույնը 1 ժամ:

3. Առաջադրանքի հատուկ նպատակներ

Առաջադրանքի հատուկ նպատակներն են.

- 7 մարզերից յուրաքանչյուրի համար տրամադրել շահառուների պատմություններ, ինչպես նաև ներկայացնել, թե ինչն են նրանք համարում ծրագրի իրականացման արդյունքում անձնական և համայնքային մակարդակներում տեղի ունեցած առավել նշանակալից փոփոխություններ: Այս պատմությունները կօգտագործվեն ծրագրի լուսաբանման և հետագա գնահատման համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց և խոցելի խմբերին. հարցվածների առնվազն 30 %-ը պետք է լինեն կանայք կամ կանանց կողմից ղեկավավող ՏՏ-ներ, 20 %-ը՝ խոցելի խմբերի ներկայացուցիչներ և 15 %-ը՝ երիտասարդներ: Հաջողության պատմությունների թիվը պետք է լինի 15-20:

- Տրամադրել նյութերի պատրաստ աղբյուր՝ գիտելիքների կառավարման, հաշվետվողականության, ռեսուրսների մոբիլիզացման և ծրագրային հաջողված աշխատանքների ընդլայնման համար:
- Իրականացնել տեսանկարահանում/ձայնագրում և լուսանկարահանում, որոնք կկցվեն շահառուների պատմություններին և կարձանագրեն ծրագրի ձեռքբերումները:

Ներկայացման ենթակա հիմնական արդյունքներ

Սույն առաջադրանքի շրջանակում ընտրված Ծառայություն մատուցողը պետք է ներկայացնի հետևյալը.

- **Շահառուների պատմություններ՝ գրավոր տեսքով**
  - Գրի առնել և շարադրել 15 հաջողության պատմություն՝ հաշվի առնելով հետևյալ կետերը.
    - 15 հաջողության պատմություններից առնվազն 4-ը պետք է վերաբերի կանանց կողմից ղեկավարվող ՏՏ-ներին, 3-ը՝ խոցելի խմբի ներկայացուցիչներին և 2-ը՝ երիտասարդներին,
    - 5 հաջողության պատմություն պետք է վերաբերի Պատուհան 1-ի մասնակիցներին,
    - 3 հաջողության պատմություն պետք է վերաբերի «Բաղադրիչ 1. Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչին,
    - 7 հաջողության պատմություն պետք է վերաբերի «Բաղադրիչ 2. Գյուղական տարածքների ջրային ենթակառուցվածքներ» բաղադրիչին:
  - Պատմությունների նախնական տարբերակը ԾՄ-ն պետք է ներկայացի ԳՏՏՋ ԾԻԳ-ին՝ հաստատման համար:
  - Ստացված արձագանքի հիման վրա ԾՄ-ն պետք է վերջնական տեսքի բերի շահառուների պատմությունները:
- **Տեսաֆիլմ**
  - Ստեղծել 45-60 րոպե տևողությամբ տեսաֆիլմ (բաղկացած 4-2 րոպե տևողությամբ կարճ տեսանյութերից, որոնք նպատակահարմար կլինեն սոցիալական մեդիայի հարթակներում (օրինակ՝ YouTube-ում) տեղադրելու համար և ցույց կտան ԵԳՖԱԾ-ի բոլոր բաղադրիչների շրջանակում գրանցված հաջողությունները և շահառուների վրա թողած ազդեցությունը:
  - Մշակել տեսաֆիլմի հայեցակարգը և սցենարը, ապահովել ձայնային և գրաֆիկական ձևավորումը,
  - Ապահովել տեսաֆիլմի անգլերեն ձայնավորումը,

    - Ապահովել տեսաֆիլմի անգլերեն ենթագրերը,
    - Իրականացնել համապատասխան տեսանկարահանումներ և նկարահանել հարցազրույցներ ծրագրի շահառուների և շահագրգիռ կողմերի հետ,
    - Անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմին ավելացնել ենթագրեր:
- **Լուսանկարահանում**
    - Բարձր լուծաչափով, մշակված և տակագրերով առնվազն 300 լուսանկար՝ բոլոր հաջողված պատմությունների վերաբերյալ:
- **Հաշվետվություններ և փաստաթղթեր**
    - **Մեկնարկային հաշվետվություն**, որը կներառի օրակարգը, տեսաֆիլմի ստեղծման ժամանակացույցը, հայեցակարգը և սցենարը, ստեղծվելիք գովազդային նյութի բնույթը:
    - **Հաշվետվության նախագիծ**, որը կներառի անցկացված հարցազրույցների նախնական արդյունքները, ձայնային և գրաֆիկական ձևավորումը և տեսաֆիլմի նախնական տարբերակը:
    - **Վերջնական հաշվետվություն**, որը կներառի հիմնական արդյունքների վերլուծությունը, լուսանկարները, ներառյալ՝ հարցազրույցների բոլոր մասնակիցների անուններն ու կոնտակտային տվյալները, ինչպես նաև յուրաքանչյուր մասնակցի կողմից ստորագրված համաձայնության ձևաթղթերի բնօրինակները:
    - Հարցազրույցների բոլոր ձայնագրությունների և/կամ դրանց վերծանումների պատճենները:

Տեսաֆիլմը պետք է լինի բարձր որակի՝ 16:9, 1080p (HD) կամ ավելի բարձր լուծաչափով;

4. Առաջադրանքի տևողություն

Առաջադրանքի տևողությունը 2-3 ամիս է: Ստորև բերված են ներկայացման ենթակա հիմնական արդյունքներ ցանկը և ներկայացման ժամկետները.

Ներկայացման ենթակա արդյունք	**Ներկայացման ժամկետ (պայմանագրի շնորհումից հետո)**
Մեկնարկային հաշվետվություն	1 շաբաթ
Հաշվետվության նախագիծ	8 շաբաթ
Վերջնական հաշվետվություն	10 շաբաթ

5. Հիմնական անձնակազմի որակավորում

Ծառայություն մատուցողին ներկայացվող պահանջներ (կարճ ցուցակման չափանիշներ)

- Տեսանյութերի նկարահանման և ստեղծման առնվազն 5 տարվա փորձ՝ առավելագույնը 50 միավոր,
  - Զարգացման ծրագրերի գործունեության վերաբերյալ, հրապարակման համար նախատեսված նյութերի և միջազգային կազմակերպությունների համար տեսանյութերի ստեղծման մեծ փորձ,

- Հարցաթերթիկների կազմման և դեմ առ դեմ հարցազրույցներ անցկացնելու առնվազն 3 տարվա փորձ՝ առավելագույնը 50 միավոր,
  - Հայաստանի գյուղական վայրերում աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն:

Հիմնական անձնակազմ

Հիմնական մասնագետներ

- **Ծրագրի համակարգող**
  - Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ նմանատիպ նախագծի շրջանակում,
  - Հաղորդակցման, համակարգման և խնդիրների լուծման գերազանց հմտություններ,
  - Հայաստանի գյուղական վայրերում աշխատանքի փորձ,
  - Անգլերենի և հայերենի իմացություն,
  - Մագիստրոսի կոչում վարչարարության, կառավարման, զարգացման կամ համապատասխան այլ ոլորտում:

- **Տեսանյութեր ստեղծող**
  - Տեսանկարահանման և մոնտաժման գերազանց հմտություններ,
  - Գերազանց տեխնիկական հնարավորություններ (գերժամանակակից, գերադասելի է՝ բարձր հստակությամբ (High Definition) տեսանկարահանող սարքավորումներ)՝ տեսանյութի ստեղծման անխոչընդոտ և որակյալ իրականացում ապահովելու համար,
  - Ֆիլմերի ստեղծման առնվազն 3 տարվա փորձ,
  - Զարգացման ծրագրերի գործունեության վերաբերյալ, հրապարակման համար նախատեսված նյութերի և միջազգային կազմակերպությունների համար տեսանյութերի ստեղծման փորձ: